

Հառաջ տար նրան և ձեռքդ մեկնիր,
Տույց տուր փրկության արյունոտ ուղին,
Կովից փախչողին ծաղրանքով հեզնիր,

Փառագոչ երգով գովիր կովողին.

Միրտ տուր ընկածին, գետնից վեր քաշիր.
Մի թողնիր երբեք, որ մնա նա ցած.
Կենդանի երգով զարթեցրու, շարժիր
Ջգացմունքները նրա վիատած.

Բարկության հրով շնչիր չարի դեմ,
Որ թույնով, փողով գահ է բարձրացել,
Եվ լուսավորիր, ցույց տուր ամբոխին,
Թե ինչ ընթացքով չարիք է գործել:

Թող որ ճանաչե և պատուհասե

Նրա չարությունն ամենակատար,
Եվ այնուհետև կուրորեն չասե,
Մեծ կամ մարդասեր, ազգի բարերար.

Եվ պատվանդանը հինքից խորտակիր
Ոսկի հորթերի, ինքնամոլության,

Մարդոց սրտերում դարձյալ հաստատիր
Լրբությանք մերժած գահն աստվածության.

Մենք այն ժամանակ և կրգանք քեզ հետ
Եվ քեզ կրսիրենք, կրփառավորենք,
Սրտի հրճվանքով կանվանենք «պոետ»,

Ամեն մի խոսքի կրնդունենք օրենք:

1890
